

Հաղորդում էր որ պրոեսական Վիկտորի
թագաւորը մերժել է ընդունել Գրանտա-
կան դեսպանին: Ո՞ր էր ուղարկել այդ հե-
ռադիրը:— Ինքը Բիսմարկը: Նա կեղծել
խարդախել էր իրողութիւնները: Այդ հե-
ռադիրը յետոյ պատերազմը անխուսափելի
զարձաւ: Բիսմարկ Հասար իր նպատակին:

Պրանսիան ջարդովեց: Իսկ Բիսմարկ Ֆը-
րում: Ահա մի երկու փաստ: Երբ ստաց-
վում է տեղեկութիւն թէ Գարիբալդի և
նրա 13,000 կամաւորները գերի են ընկել
գերմանացիների ձեռքը (սխալ էր այդ տե-
ղեկութիւնը), Բիսմարկ բացականչեց. «Որ-
քան ցաւալի բան 13,000 կամաւոր գերի
են վերցրել: Ինչո՞ւ չէին նրանց հրացանի
բռնում»: Երբ ժխել Ֆալը զանգատում
էր Բիսմարկին թէ Պարիզի ուժերը ձեռ-
նկալում են կոյրերի ապստամբները, Բիս-
մարկ պատասխանեց. «Ինչո՞ւ էք զանգա-
տում: Գուցէ աւելի փառ բան էք անում:
Գուցէ ուժերը ձեռքը մեր առողջ մարդ-
կանց»: Իսկ երբ Ֆալը ասաց թէ բուլղար-
ներում մայրերը ման են դալիս իրանց և-
րեխաների հետ, Բիսմարկ բացականչեց.

«Ձարմանալի է որ մայրերը դեռ չեն կե-
րել երեխաներին»: Երբ լուր էր գալիս որ
գործերը հրդեհել են այս ինչ գիւղը, նա
ուրախութեամբ շփում էր իր ձեռքերը և
ասում. «Այ, ես գովում եմ այդ բանը»: Մի
բալթացի գերմանացի հարցնում է իր
օգնիչներին. «Ինչպէս վարվել գիւղի հետ,
պէ՞տք է կրակ տալ, թէ մեղմ կերպով
քարուքանդ անել»: Բիսմարկ հիմնում է,
լսելով այդ խօսքերը: Այն ժամանակ, երբ
տասնեակ հազարաւոր մարդիկ էին կո-
տորվում, Բիսմարկ հանդիսաւ էր և միայն
աշխատում էր լաւ ուտել, խմել շամպայն
զինի և այդ ժամանակ նրա խօսակցու-
թիւնը կերակուրների մասին էին, միայն
յաճախ բացականչում էր. «Պէտք է հրա-
ցանի բռնել, կրակել, այրել»:

Բայց ի՞նչ երկարացնել: Վերջին փաստը
թող լինի այն խաղաղասիրութիւնը, որ
բացվեց անցեալ տարի: Բիսմարկ դաշն
էր կապում Աւստրիայի հետ Ռուսաստանի
դէմ և մի և նոյն ժամանակ ծածուկ դա-
շնն Ռուսաստանի հետ—Աւստրիայի դէմ:

Այսպէս էր Գերմանիայի հանձարը, այն
կուռքը, որին երկրպագում են ամէնքը:
Նա էր, որ Գերմանիան միացրեց, դարձ-
րեց մի սարսափելի ոյժ: Եւ նրա աշա-
կերանները այսօր խօսում են իրաւունքի,
ազնւութեան անունից: Յունաստանը կա-
րող է նոյն իսկ հարկեր տարվայ ընթաց-
քում գործել այն չարագործութիւնների
կէտը, որոնցով այնքան փառաւորվել է
Բիսմարկը:—Գերմանական դիպլոմատիան այն-
քան արատաւորված է, որ իրաւունք չունի
խօսել ազնւութեան մասին: Նա միայն

դայի բարոյադիտութիւնն է ներկայաց-
նում: Ինչ որ ինքն է ասում, լաւ է, վայե-
լու է մի կուլտուրական ազդիւն, թէ և մի
հաս լաւ գործ չէ կարող ցոյց տալ, որ
պատիւ քերէր նոյն իսկ ոչ-կուլտուրական
մարդուն:—Բիսմարկիան դարձրեց նախա-
դրեց դայի բարոյադիտութիւնը. նրա
տեսակէտից աւազակ է Յունաստանը և
անմեղ զառնուկ է Թիւրքիան: Բայց ի՞նչ
է ասում աշխարհը, ի՞նչ են ասում նոյն-
գերը...

Գերմանիան բարբարոսաբար ջարդեց Ֆը-
րանսիային: Սակայն ո՞ւմ կողմն էր ազդե-
լի համակրութիւնը: Պրանսիան, արևոս-
քամ դառած, մահվան դուռը հասած
Պրանսիան, ինքը՝ չէր, քանի որ մեռնում
էր իր պատելի համար: Իսկ Գերմանիան,
որ քանդում, ոչնչացնում էր, զարմացրեց
իր փայլուն յաղթութիւններով, բայց սէրը
համակրութիւն չը վաստակեց: Ինչո՞ւ:—Ո-
րովհետեւ նա դայի բարոյադիտութիւնն էր:
Նոյնը և այժմ, աւելի փոքրիկ դիրքով
—Թիւրքիա և Յունաստան:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ի Ն Ե Ր
(Պատասխան թղթակցից)

Ա թ է ն, 24 ապրիլի: Մօլէնց յետ մղեց մի
նոր յարձակումը, որ թիւրքերը գրծեցին Վե-
լեստիոսի վրա. թիւրքերը անապի կորուստ ու-
նեցան:

Առաջին յարձակումը Ֆարսալի վրա փառաւոր
կերպով յետ մղեց թագաժառանգն անձամբ, որ
կուռն էր հերոսաբար:

Մեծ կռիւ է սպաւում գլխաւոր զօրքառմի
կողմից:

Բ ու խ ա Ր Ե ս, 24 ապրիլի: Մօլէնց յաղ-
թական կերպով յետ մղեց նոր յարձակումը Վե-
լեստիոսի մօտ: Թշնամու կորուստը 5000 է:

Առաջին յարձակումը Ֆարսալի մօտ եռան-
գետ կերպով յետ մղեց թագաժառանգ իշխա-
նի անձնական հրամանատարութեան տակ:
Սպաւում է վճռական կռիւ գլխաւոր զօրքառ-
մի կողմից:

Թագաւորը և թագաժառանգը ողորկված ցոյ-
ցերի առարկայ դարձան Աթէնքում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Օ Ր Է Յ Օ Ր

XV

Վարդապետ իջաւ, աւարտեց թաւրիղի փո-
ղցնելու կատարելով դրաման, և ուրեմն մենք,
հիմնված միմիայն փաստերի վրա, ստանա-
րիւն կերպով կարող ենք անկողմնապահ կար-
ծիք յայտնել չարեւեան դրամայի մասին:

Ինչ էր այդ դրամայի հիմնական պատճառը.
—մահմադականի ատելութիւնը դէպի բրիտո-

նեան, այսինքն նոյնը, ինչ որ միշտ, ինչ որ
տանն տարի, քանն տարի առաջ, այն տարբե-
րութեամբ, որ այս անգամ այդ ատելութիւն
զրգուող միմիայն սէյիդները կամ մօլանները
չէին, այլ և թիւրքաց սահմաններից եկած քա-
ղաքական ազնւաները: Այս անգամ էլ առաջին
նշանը տրվեց նոյն ձևով, ինչ ձևով տրվել է
միշտ, «Գեաւորը վերաւորեց պարսիկ կնոջ,
գեաւորը հայհոյեց մեր հաւատը»,— և այդ նը-
շանը արդէն բաւական էր, որ ամբողջ մի ակն-
թարթում փակէր խանութները, և ընկած ֆա-
նատիկոս սէյիդները յետից՝ սկսէր կոտորել,
ջարդել, թալանել, նոյն իսկ փորել գերեզ-
մանները և այնտեղից դուրս հանելով մեռելնե-
րի գիակները՝ վերաւորանքի աւարկաց դարձնել
նրանց...

Այդ ձևով սկսված յարձակումը քրիստոնեա-
նեան դէմ թաւրիղում առաջինը չէ, ինչպէս նա
առաջինը չէ ոչ Պարսկաստանի ուրիշ քաղաքնե-
րում, և ոչ էլ թիւրքիայում: Այդ պատճառով,
պարսից կառավարութիւնը, —ի պատել նրան
պէտք է ասել,—չառ էլ հաւատ չէ ընծայում
սէյիդների շահապաշտներին, և բայց դրանից
այս անգամ խիստ, կտրական առաջադրութիւն-
ներ ստանալով թաւրիղի ուստաց հիւպատոս
պ. Պետրովիչ, ամենախիստ միջոցներ ձեռք
տաւ. այդ սէյիդական տաճարը զուգելու
համար, և յոյս ունենը, որ դեռ երկար տա-
րիներ չի բարձրանայ այն վարագոյրը, որ
դեռ նոր իջաւ և ծածկեց թաւրիղի փողցնե-
րում տեղի ունեցած դրամայի տեսարանները...

Այդպէս նայեցին թաւրիղի դէպքերի վրա
թէ պարսից կառավարութեան ներկայացուցիչ-
ները, թէ թաւրիղի բարձր հիւպատոսները, և
գլխաւորապէս ուստաց հիւպատոս պ. Պետրովի,
և թէ վերջապէս կողմնաւորուած ուստաց և հայոց լրա-
զիրները, որոնք ամենամահաբանական սեղանա-
թիւններ տալովեցին այդ դէպքերի մասին:
Միակ բացառութիւնը կազմեց «Կապաշ» լրա-
գիրը, որը, ապրիլի 10 համարում տպած մի
մեծ թղթակցութեան մէջ՝ անուղղակի կերպով
այն միտքն է անցկացնում, թէ թաւրիղի խառ-
նակութիւնների յարաբերակները հայերն են:
Թղթակցից, սէյիդների բերանով, հաւատացնում է,
թէ այդ քաղաքը անելով հայերը ուզում են զի-
նել Ռուսաստանը Պարսկաստանի դէմ, ինչպէս
զինել են արդէն Անգլիան թիւրքիայի դէմ: Բայց,
աւելացնում է թղթակցիցը, «հայերին դժուր առին
որ թաւրիղը՝ ոչ թէ միայն աշխարհադաւան տե-
սակէտից, այլ և ցեղական տեսակէտից պարսից
քաղաք է» (միթէ դրա դէմ վիճող եղել է): Վեր-
ջացնում է թղթակցիցը յայտարարելով հետեւեալը.
«Ըստ երևոյթի, հայոց եպիսկոպոսը համարիտ չէ
իր յանդուս գն հաւատացնողներին հետ» (ինչի մէջ
չը լինի թէ թղթակցիցը թաւրիղի փողցնեցում
է Մեծ-Հայաստանի ուրուականն է տեսել)...

Այդ տեսակ մի թղթակցութիւն կարելի էր

կատարելապէս անտես առնել, եթէ նա տպագր-
ված լինէր մի անկախ, մասնաւոր օրգանի մէջ,
բայց ոչ թէ թիւրքիոյ կիսապաշտօնական օրգա-
նի մէջ, որը, նոյն իսկ իր պրօքրատի զօրու-
թեամբ, ոչ թէ պէտք է, այլ պարտաւոր է ու-
սումնասիրել մեր հարեան երկիրների կեանքը,
և լաւ տեղեկակ լինել այնտեղ տեղի ունեցող
բոլոր շարժումներին: Եւ ահա կիսապաշտօնա-
կան «ԿԱՊԱՇ» լրագիրը, իր թղթակցի բերա-
նով, հակառակ փաստերի, հակառակ թիւթիւսի
ամբողջ մատուցի տեղեկութեան, այն միտքն է
անցկացնում, որ այդ խռովութիւնների մէջ մե-
ղաւորները հայերն են, որ նոյն իսկ քաղաքա-
կան յարաբերութիւններ են ունեցել, ձգտելով
զինել Ռուսաստանը Պարսկաստանի դէմ, մոռա-
նալով որ թաւրիղը բուն պարսկական քաղաք
է, և այն և այն...

Այդ տեսակ զառանցանքների մէջ ընկնելով,
«ԿԱՊԱՇ» լրագիրը մոռանում է երկու բան:
Նախ՝ որ այդ տեսակ ֆանատիկոս շարժումներ
տեղի էին ունենում թէ Պարսկաստանում և թէ
թաւրիղի մէջ դեռ այն ժամանակներում, երբ
Անգլիան բուլղարին չէր զինված թիւրքիայի
դէմ, այլ, ընդհակառակն, շատ բարեկամ էր նը-
րան, և թէ այն ժամանակ, երբ Ռուսաստանը,
զինված Պարսկաստանի դէմ, չէր կապված իրա-
նի հետ այժմեան բարեկամութեամբ: Եւ երկ-
րորդ՝ եթէ հայերը մեղաւոր լինէին, և այն էլ
ներշնչված երկու պետութիւններին կուռցնելու
քաղաքական յանդուգն դիտաւորութեամբ, ուս-
տաց հիւպատոսաբանը նրանց չէր ցոյց տալ վըճ-
ռական պաշտպանութիւն, մի կողմից ապաստան
տալով հաւաքված հայերին և միւս կողմից պա-
հանջելով նրանց յիշանքները և կապի վերական-
գնումը, սպառնալով, հակառակ դէպքում, Ջուլ-
ֆայից դուր անցկացնել Պարսկաստան...

«ԿԱՊԱՇ» լրագիր լօղկիւթով, դուրս է գա-
լիս ուրեմն, որ մեղաւոր, քաղաքական դիտում-
ներ ունեցող և անարդար տեղից սէյիդների ըն-
տանեկան պատիւը արատաւորող հայերը պաշտ-
պանութիւն են գտել ուստաց հիւպատոսաբանի
կողմից, այն էլ Պետերբուրգից եկած կարգա-
դրութեան համաձայն, կամ ուրիշ խօսքով՝ ուս-
տաց հիւպատոսը նոյնպէս մասնակցել է հայերի
յանցանքներին...

Կա արուսւրդ է, ի հարկէ: Մեղադրել հիւ-
պատոսաբանը և ուստաց հիւպատոսին այդ տե-
սակ յանցանքների մէջ՝ չէ կարող նոյն իսկ
պարսից սէյիդների օրգանը, ուր մնաց ուստաց
կիսապաշտօնական օրգանը: Միում է ուրեմն
խոստովանել, որ «ԿԱՊԱՇ» լրագիրը կամ ո-
չինչ տեղեկութիւն չունի թաւրիղի դէպքերի
մասին, կամ եթէ ունի, դիտումը յեղադրվում
է փաստերը, իրան յայտնի նպատակով:

Խ. Մալումեան

իր կողքին միմիայն այս թոռնուկն է մնացել:
Միւսները կամ կոտորվեցին այն սոսկալի երե-
կոն, կամ այս դառնութեան ժամին տանջվում
են թիւրքաց ահուկ բանտերի մէջ... Եւ ծե-
րուկը բռնեցնեցը սեղմում է աչքերին, բըռ-
նում է իր թոռան ձեռքը, դուրս է գալիս այս
հիւպատէր անից ու զոգրուում քաղաքով, պատէ
պատ գիւղերով, դիմում է իր ողորմելի բնակա-
րանը և այնտեղ ծոնկ չըթած՝ յաւիտեանական
մոռացումն է մաղթում յարութիւն առած Յի-
սուսից:

—Կեր բաժնիդ, Ձիւնիկ ջան, կեր, կրկնում
էր Բարսեղը իր քրոջը: Բայց Ձիւնիկը աչքերը
իր ամանին յառած, քարացել-մնացել էր և ո-
չինչ չէր լսում: Նրա վառ լիզողութեան մէջ
անցնում էին իր դժբաղդութիւններով լի կեան-
քի պատկերները:

Նա մի փոքրիկ աղջիկ էր, ունեւոր ծնողների
գուռար, մի օր (վաղուց է՝ այդ) բուրդ ցեղա-
պետը ձիւնաւորներով գիշեր ժամանակ բաղնից
տան դուռը: Հայրը մի գառ մօրկեց, իսկ գի-
շերը նա լսեց ձիւնը ու աղաղակներ, և երբ
վեր թռաւ դարձուրած ու դուրս վաղեց, նրա
աչքերին ներկայացաւ մի սոսկալի տեսարան:
Շէմքի վրա, ստեղծ ու ձեռները կապած՝ փոված
էր հայրը և նրա կողքին ընկած էր մեծ եղբոր
արեւնոտ գիտիկը: Տունը լցվեց գիւղացիների,
ամեն ինչ խառնվեց և այս իրարանցումի մէջ
նրա խեղճ մայրը խելագարի նման կանչում էր

իր զաւակներին, — աղալի, որի գիտիկը նա
կարծես չէր տեսնում և իր սիրելի Գոհարիկին,
որին բէջ տարել էր:

Յետոյ մի օր նրա բաղդի ամպամած երկնքում
էլ արեւ ծագեց. —նա ամուսնացաւ գիւղի ուսուց-
չի հետ. երեք օրվայ ամուսնացած էին նը-
րանք: Մի օր վաղի հրամանով ոտակաւները
չըջապատեցին ուսուցիչաբանը, սարսափահար
մանուկներին մարմններով դուրս վաճեցին, իսկ
Սարգսեանին տարան... տարան, բայց ուր, երբէք
չը կարողացաւ իմանալ ինքը՝ Ձիւնիկը:

—Կեր բաժնիդ, Ձիւնիկ, երկնքը, կրկնեց եղ-
բայրը, բայց Ձիւնիկը «կուշտ եմ» ասաւ, վեր-
կացաւ տեղից, որ գնայ իր անկիւնում թափի
իրան խեղդող արտառութիւնը:

—Մի լար, աղջիկ, Աստուած մեծ է, ասում
էր Բաշքեղիկը Վիգոն իր աղջկան, բայց Յուսիկի
աչքերից զըլ-զըլ թափվում էր արտառութիւնը:

Հայոց երկրի ամեն կողմերում բռնկվել էր
անողորմ կոտորածը, որը հրդեհի օդի նման գը-
նալով սեղմվում էր վառի վրա: Մէկ օր մօտա-
կայ գիւղերի կոտորածի գոգիւր հասաւ Բաշքեղի:
Նրա լեռնաբնակ ժողովուրդը աղաւթահար եւ-
զաւ: Ով կարող էր՝ փախաւ, սրբէն զի մի ելը
գնան էր գէլի սուտի հողը... Մէկ առաւօտ Բաշ-
քեղի գիւղի ամուսնաւոր տունը կրակ զցեցին և նրա
ընտանիքը մարմնեցին: Այն ժամանակ տէր-Շմա-
ւանը իր ժողովրդի հետ ուրացաւ Լուսաւորչի
սուրբ հաւատը, յուսալով որ Աստուած կը նե-

րի իր բռնի և առեւեաւ ուրացուի: Չառիկ
չարաթ օրվայ առաւօտն էր: Տէր-Շմաւանը աւ-
րաջ գիշերը չէր քնել: Գեռ լոյսը չէր բացված,
երբ նա ձկնի ճրագը վառեց և դարձեց երե-
կունջը:

—Երեցիկին, ասեց նա, այսօր Տէրն մեր Յի-
սուս Գրիգորոսի սուրբ Յարութիւնն է, վեր ել,
աղօթենք:

Այս ասելով, նա պատից մի քար հանեց,
դուրս բերեց նրա ետեւ թագգրած Աւետարանը,
դրեց նրան սեղանի վրա և մի մեղրամոմ վա-
ռեց դէմը: Երկար աղօթում էին նրանք: Երբեմն
Յուսիկը չըթած տեղից ոտի էր կանգնում, գու-
ռը կամեց բռնում էր և դուրս էր նայում, մի
դուցէ թիւրքերը լրտեսեն իրանց: Երբ աղօթքը
վերջացաւ...

—Ես պիտի երթամ, ասեց տէրաւորը, ես այլ
ևս չեմ կարող տանել այս տանջանքները, պիտի
գնամ Քարաշէն, երեստ ժամի քարերին քնեմ
ու «Գանիկը» լսեմ: Յուսիկը աղաւթում էր, թա-
ւալվում ոտերի տակ, որ չը գնայ, թիւրքերը կը
հանաւան և այլ ևս փրկութիւն չի լինի:

—Աստուած բարկացած է վրտու, պատառիտա-
նեց տէրաւորը, ես երազ եմ տեսել, թող իմ
մահը ու առձառնի մէջը լինի: Այսօր հաղաբար
հայեր զոհվում են իրանց հաւատի համար, իսկ
ես այդ հաւատը ուրացել եմ, ես՝ որ կրօնաւոր
եմ, վայ ինձ, վայ ինձ:

Եւ երբ արեւ թերթվեց, երկունս էլ դուրս ե-
կան իրանց գեանափորից և արագ քայլեցին

դէպի մօտակայ գիւղը... Լեռների վրա դեռ
ձիւն էր նստած, սառը քամին թափանցում էր
մարդու ոտկոթները: Յուսիկը զոգրուում էր իր
ցնցոտիների մէջ:

—Մեր ետեւից մարդիկ են գալիս, ասաց Յու-
սիկը:

Տէրաւորը շուտ եկաւ—Հեռում երևում էին
երկու զինուորներ, որոնք կարծես հետեւում էին
նրանց: Քարաշէնի խրճիթների միջից երևում
էր արդէն եկեղեցու գմբէթը: Այստեղ չըթեց
տէրաւորը, ձեռները պարզեց դէպի եկեղեցին,
ոտամանները հանեց և ստորերից բայցեց ձիւ-
նի մէջ:

—Նը մրտա, տէրաւոր, ասում էր Յուսիկը:

Եկեղեցին լիքն էր: Յուսիկի աչքերին ներկա-
յացաւ լուսաւորված տաճարը և պատարագիչը
թաղը գլխին ու գառ չուրջաւոր վրան: Իսկ իր
կողքին, դրան չէմբի տակ, սառը քարի վրա
չըթած, երեսը գետնին էր բռնում, երեսայի նման
զուրկը քարին խփելով հեկեկում էր կրօնա-
րացը:

—Ասեւ կերէք այս է մարմին խմ, կանչեց
պատարագիչը, սկիզբ բարձրացնելով: Եւ ամբո-
խը, ինչպէս մի մարդ, ծոնկ չըթեց, մի խուլ
զղրդին բարձրացաւ հաւատով լի հարիւրաւոր
կարծեքերը:—«Տէր ողորմեա, տէր ողորմեա»

—Տէր ողորմեա անարժանիս, ուրացողիս, հե-
կեկաց տէր Շմաւան և երեսնիւայր ընկաւ գետ-
նին: Ժամը դատարկվել էր արդէն, մոտերը
հանգրցած: Տէրաւորն հաղիւ պոկեցին դռանից

—Ուր չը գիտես մեր գործերը, որովհետև
ապրում ես Ռուսաստանում: Երբ մենք մի
գամ էլ լաւ կը ջարդենք հայերին, այն ժա-
նակ էլ նրանք ոչ մի բան չեն պահանջի
քեզ անգամ մենք ամենքի մտքը զոդ գցեցին:

և ոչ միայն հայերը, այլ և պետութիւնների դաշնադրան ներկայացուցիչները և իրանց պահակա-նաւերը փախան:

—Այնուամենայնիւ ես ոչ մի օգուտ չեմ տեսնում զրա մէջ: Չէ որ վերջի վերջոյ զրա-հանաւերը կը գան և Պոլիս և ձեր երգին վերջ կը դրին: Միշտ հօ աջող չի անցնի, ամեն բան վերջ ունի:

—Տիւ, ասաց նա, մենք վաղուց գիտենք, թէ ինչ է մեզ սպասում, բայց մինչև կը գան, և կը սկսեն ուժեղանալ, մենք ջարդած կը լինենք շատ քրիստոնեաներ: Այն ժամանակ մենք մի-այն հայերին չենք կոտորի, այլ ամենքին:

—Փոխանակ սպանելու անպաշտպան մարդ-կանց, աւելի լաւ չի լինի գնալ կրեմէ ձերանց մօտ:

—Եւ, մենք առանց այն էլ չառ զօրք ունենք և եթէ յայնքը պատերազմ յայտնեն մեզ, մենք չենք վախի: Փառք Ալլահին, մենք պէտք չու-նենք քաջութիւն որոնելու:

—Իսկ անցեալ կոտորածին դու մասնակցում էիր:

—Ինչպէս չէ, ես առաջինը սպանեցի 5 հայ, բայց այդ թիւ է, որովհետեւ երբ ես սկսել էի ողորդել, հրամայեցին դադարեցնել. ախտա, որ խոյլ չը տուին: Մենք այն ժամանակ մի ան-գամից ամեն բան կը վերջացնէինք: Այն հայե-րը այժմ էլ մտադիր են ապստամբել: Մենք լաւ գիտենք այդ և արդէն վաղուց պատրաստ ենք: Ես անհամբեր սպասում եմ, թէ երբ կը սկսեն: Այս անգամ յետ չեմ մնայ...

Մուշից ստացված նամակներից քաղում ենք հետևեալը. «Հին և նոր տուրքերի հետ վրա եկած է Ալեքսան (սլաւոն հարկ) սուրբը: Կառավարութիւն կը պահանջէ, որ անայից ստացա՞ (հին հայեր) լեցուի, հօգ չէ թէ այս տարի հարկերին մէկը չէ մնացել: Մտաւայ գիւղերի ոչխար, տաւար հեղուրջի (տառած ձիւն) վրայով քաղաք կը բերուն և կառավա-րութեան ձեռքով ի հայիւ Ալեքսան տրոց կը վաճառուին: Եթէ երբեք մի փոքրիկ մաս ալ աւելանայ կառավարութեան տարբեր տուրքի տեղ վար կը դրուի: Արդէն այդ ոչխար տաւար-ներէն 100 արծողը հազիւ 20—25 զրիւ ծախուի:

«Միւս կողմէն գիւղական հասարակութիւն սովորաբար կը մեռնի: Թէև տեղ-տեղ հացի ամ-բարներ՝ կապալաւորներու և աշխարհապետնե-րու ձեռքի տակ առատ է, սակայն դժբաղդու-թիւն այնտեղ է, որ գործերի դադարումով ու երթևեկութեանց դժուարութեան պատճառաւ, դրամի սուղակի սով ստեղծվել է մեր երկրի մէջ: Անցեալ օր լեռնական Պ. գիւղացի 20—25 թշուառներ իրենց սովածներին մի կտոր կըլկըլ կորեկ հասցնելու համար, վարձ՝ Մշոյ դաշտ իջած էին. վերադարձին սուղակի բուրբ կը բռնուին, մի քանիներ կը սաւին, ձեռք թողնելու տակ կը կորսուին, իսկ մնացածները, ջարդ ու փշուր ուրիւս ոտը, որին ձեռք մրսած ու թափած, ա-ռաջուան նման մերկ ու անօթի իրենց սառ-ընկալարներ կը հանին:»

Անգլիական համայնքների փողովի ապրիլի 27-ի նիստում:

Մ օ ն Կ. Ինչ վիճակի մէջ են Ալիի կոտորածի ղեկավարների պատասխանատուութեան և պատ-ժելու հարցերը:

Կըրք օ ն. Կ. Պոլսի բրիտանական դեսպանը հաղորդում է, թէ իր առաջադրութիւններին, որ նա արել է Բ. Գրան, պատասխանել են, որ թիւրքաց կառավարութիւնը պատուիրել է քըն-նել և պարզել կոտորածների պատասխանատու-թեան գործը և պատժել այն պաշտօնեաներին, որոնք արատաւորել են իրանց իշխանութիւնը:

Մ օ ր օ ն. Ինչպէս էր թիւրքաց զինուորական հրամանատարը, որին նկարագրում են իբրեւ կարգապահ և փողովի ղեկավարող մի անձ, հրաժարական տուել թիւրքացի կոտորածից մի քանի ժամանակ առաջ:

Կըրք օ ն. Մենք չենք լսել երբեք, որ հրա-մանատարի արձակումը կապ ունենայ կոտորած-ների գործի հետ:

Մ օ ր օ ն. Յանկալի է, որ հետազօտվելը լրա-գիրներին մէջ ապոված այդ լուրը:

Կըրք օ ն. Կարծում եմ, որ այդտեղ մի թիւ-րիստացութիւն կայ, որովհետեւ թիւրքացի ղեկա-նները:

րական հրամանատարը արձակված է կոտորածից յետոյ՝ կառավարի տակ, իբրեւ կոտորածի պա-տասխանատուներից մէկը:

ՔՈԼԳՐԱԿԱՆ ՄԻՏԻՆԳ

Սօֆիայից, ապրիլի 16-ից, ուստաց հետազո-րական գործակալութեանը հետազոտում են. «Այսօր, ժամի 3-ին կէսօրից յետոյ, կայացաւ մի մի-տինգ, որ կազմել էին ուսանողները: Հասախօս-ները՝ ուսանող Ստեփանով, զօկտօր Կրաչկո-սօցիալիստ Կիրիլով, ուսանող Գիմիտրով, զօրա-վարներ Կոչո և Լուստառ յարձակվում են թիւր-քիայի և բողոքական կառավարութեան վրա: Առաջարկվեց որոշում, որը նախ յայտնում է յանդիմանութիւն արտաքին քաղաքականութեան, երկրորդ պահանջվում է դաշնակցութիւն Սեր-բիայի և Գերմանիայի հետ, երրորդ, հրաւի-րում է կառավարութիւնը միջոցներ ձեռք առ-նել մակեդոնական ինքնավարութիւնը հաստա-տելու համար և չորրորդ՝ առաջարկում է մակե-դոնական կոմիտեին պատրաստել չարժու-մանկեզօնիայում: Միտինգում ներկայ չէր կու-սակցութեան ոչ մի պարագայ: Հաւաքվածնե-րը, որոնց թիւը մօտ հազար էր, հանդիսա մնա-ցին:»

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏԻՑ

Կ. Պ օ լ ս ի ց հեռագրում են «Tamps» լրա-գրին. «Հաղորդում են, որ գերմանական զենե-րալ Գրուսով-փաշա առաջինը մտաւ Լարիսա: Գերմանական զենեքայի այս քաղաքործութիւնը սատիկ շփոթութիւն է պատճառել վիճկնայի լրագիրներին, որոնք չտապել են հերքել այդ լուրը: Բայց չաչը չինելու տեղ, յօժքն էլ պատուել են: Նրանք ասում են, որ այդ գե-ներալը ինքը չէ մասնակցել պատերազմական գործողութիւններին, այլ միայն ղեկավարել է թիւրքերի գործողութիւնները: Բանից դուրս է գալիս, ինչպէս նկատում է «НОВОСТИ» լրագիրը, որ «յաղութեան» փառքը պատկանում է ոչ թէ ինչեմ-փայային, այլ գերմանական զենեքա-լին:—Եւ իրաւ, լրագիրները հաղորդում են որ Գրուսով-փաշա ստացել է սուլթանից իմփա-զի շքանշանը, աղամաններով զարդարված:

Անցեալ անգամ մենք բերինք «Standard» լրագրի թղթակցի այն տեղեկութիւնը, թէ յոյ-ները կարգով են նահանջել Մատից և Լարի-սային: Եւրօպական մի քանի լրագիրներ հակա-ռակն են պնդում, սակեւ թէ յոյները նահան-ջում կատարեալ փախուտ էր: Ի միջի այլոց թղթակցները յիշում են այն շփոթութիւնը, որ առաջացաւ նահանջող յոյների շարքերում մի ցաւալի թիւրիստացութիւնից, որ, սակայն, բու-րովի անսովոր չէ պատերազմի ժամանակ, գե-չները շատաւ կատարվող նահանջումների միջոցին: Յոյները հեծելազօրքը, կորցնելով իր տեղը, մնաց նահանջող զօրքերի ետևում: Ցա-րածվեց լուր թէ թիւրքերը գալիս են: Յոյն ձիաւորները ընդունվեցան թիւրքերի տեղ և սկսվեց երկու կողմից հրացանաձգութիւն, որ ի հարկէ, առանց մարդկային զոհերի չէր: Կարգը վերականգնվեց այն ժամանակ, երբ պարզվեց թիւրիստացութիւնը:

Աթենքից հեռագրում են «НОВОСТИ» լրագրին. —միմիստութեան անկումը հեռանք էր Լա-րիսան թողնելու անհասկանալի դործի, որ ընդ-հանուր զայրոյթով պատճառեց:

Ասում են, որ Գէօրգ թաղաւորը պատերազ-մական միմիստեր և թաղին հետ կը գնայ Ֆար-սալա, որպէս զի տեղի ու տեղը ուսումնասիրէ գործերի դրութիւնը:

Յունաց կառավարութիւնը հրամայել է ա-րեւելեան նաւատորմին ուղարկոնել Սալոնիկը: Թէև Սալոնիկը չէրք տեղ չէ հրատարակված, բայց եւրօպական մի քանի մարտանաւեր գնացել են այնտեղ, որ թիւլ չը տան յոյների ուղարկու-թիւնը:

«Figaro» լրագիրը մի չարք սրամիտ համե-մատութիւններով հաստատում է, որ յոյները այժմ զանգվում են ճիշդ նոյն դրութեան մէջ, ինչպէս Ֆրանսիացիները 1870 թւականին: Թա-մաբերներ և այն, որ միմիստ-նախագահ Բա-լի մտադիր է չարժանակ պատերազմը դա-մեցտալի եղանակով, այն ժամանակ նմանու-թիւնը աւելի պարզ կը լինի: Մի բան միայն

խանդարում է այդ նմանութեանը. դա Ֆրանսիա-կան լրագիրների հեղաշրջական ոճն է, որ բոլո-րովին սաղ չէ զարիս այն ազգին, որ 25 տարի առաջ զգում էր թէ ինչ բան է կոպիտ, ամեն ինչ սնչացնող ոչքը:

«Nord» լրագիրը, խօսելով պատերազմի սկզբնապատճառների մասին, գտնում է որ թիւրքերն էլ մեղաւոր է պատերազմ սկսելու մէջ:

Եւրօպական լրագիրները յայտնում են, որ մի քանի պետութիւններ խօսում են միջամտութեան և պատերազմը դադարեցնելու մասին: Բայց Բերլինի և Վիեննայի քաղաքական շրջաններում այն կարծիքն է, որ միջամտութեան ժամանա-կը կը հասնի այն դէպքում միայն, եթէ կուտղ կողմերից մէկը կը խնդրէ միջամտել:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՈՒՍԱՆԵՑ

Ուրմիա, ապրիլի 6/18-ին
Պարսից կառավարութիւնը այս անգամ ճիշդ որ մի մեծ հարուած տուեց Շիկակ կազմած ա-ւաղաքաբոյ քրդերին. ստացված վերջին տե-ղեկութիւնների համաձայն՝ այս տարվայ արշա-ւանքը շատ թանգ նոտեց չիկակներին. 35 զիւղ ամբողջովին կործանված և թալանված են պար-սիկ զօրքերի, և մասնաւոր Մալանցի կարիճ ասորիների ձեռքով, որոնք մեծ քանութիւններ են գործած ու հարուած աւար են բերած: Այս-ված են նաև շատ քրդեր: Այժմ չիկակները դի-մում են արած կառավարութեան զիւղութիւն հայցելու: Նրանց երեք պայմաններ են առա-ջարկված. 1) յանձնել կառավարութեան անցեալ տարվայ վանի գիւղերից և Աղբակից ու Գե-վիսից բերած բոլոր կողովուստները. 2) հա-տուցանել բոլոր անվճար մնացած տուրքերը և 3) վճարել արշաւանքի համար եղած ծախքը. բացի դրանց նրանք պէտք է, որ խալաթներ և նուէրներ տան, ըստ պարսկական սովորութեան, թագաժառանգին, Ուրմիայի նահանգապետին և բոլոր մեծամեծներին: Նրանց մի քանի օր պայ-մանաժամ է տրված և եթէ մերժելու լինեն այդ առաջարկութիւնները, այն ժամանակ մի վերջին և կատաղի յարձակում է լինելու նրանց բաժինը և այդ կերպով թերևս սահմանադուրը բոլորովին մաքրվի այդ աւազակ և աւերիչ ցեղից:

Գաւառի ընդհանուր վիճակը ոչինչ փոփո-խութիւն կրած չէ այս մի քանի օրերում, յորմէ-հետեւ Թաւրիզի շփոթութեանց լուրերն այստեղ լսվեցին: Ի սկզբան բաւական երկիւղ կրեցինք, որ մի գուցէ այստեղ եւ նմանօրինակ դէպքեր տեղի ունենան: Սակայն Թէհրանից ստացված ամենախիստ հեռագրական հրամանների արա-մադրութեան համեմատ, մեծ Մուշաթիլը և Շէյխ-Կալալը խորհրդակցելով պարսկացիներ հաճախապէս Զաֆարը Սալիմանյի՝ թէ Ուր-միում խառնակութիւններ տեղի պիտի չունե-նան: Այս տեղեկութեան վրա անդեմեղ քրիս-տոնեայ աղաքականութիւնը սկսեց մի քիչ ազատ շունչ քաշել:

Բաշ-Կալալից ստացված լուրերը հաղորդում են, որ այս օրերս այն կողմերում բաւական նը-շանաւոր դէպքեր կատարվել են. Շէյխ-Համիդը օսմանեան իշխանութեան կողմից կալանաւոր-ված տարվել է Վան. Շէրիֆ-բէկը, որ մի մեծ հարստաւար էր Գօթուրի սահմանազխում, թունաւորված մեռել է, իսկ Մալանցի, Թուկուր-ցոց և Մուկուրցոց աղաներին էլ ձերբակալելով տարել են Վան: Եթէ այս լուրերը ճշմուն, այն ժամանակ յայտնի կը լինի, որ թուրք կառավարու-թիւնը ապաշխարութեան չափից սրունում է, թէպէտ և շատ ուշ է արդէն:

Մի. Ալէքը դեռ չէ յաջողած վստայութեանի հայ գիւղացոց համար հարկաւոր եղած քանա-կութեանը եղներ գնելու:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԿԵՐ

—Վաղապէս, խօսելով Ուշտեր Ֆիլիմօրի հետ, այն միտքը յայտնեց, որ ներկայ պատերազմի և թիւրքերի Թիսալի մասնելու գլխաւոր յանցան-քը պէտք է ընկնի վեց մեծ պետութիւնների վրա, որոնք զրկեցին Յունաստանին նրա օրինա-կան իրաւունքից կրէտեում, և այդպիսով նրան մղեցին դէպի ուրիշ կողմ, դէպի Թեսալիա: —Անգլիայում ներկայումս կազմվել են բաղ-մաթիւ խմբեր, որոնք զբաղման նպատակն են փողովում յոյների համար:

—Միացեալ Նահանգների սենատում՝ սենա-տոր Ալէքս առաջարկեց յայտնել Յունաստանին Միացեալ Նահանգների համակրութիւնը ներկայ պատերազմի առիթով:

ԽԱՌՆ ԼՈՒԿԵՐ

Լոյս տեսաւ «Մուրճի» ապրիլի համարը, որ այդ ամսագրի համբերատար ըստանորդները ե-րկի ըստ սովորութեան սրտատու էին կամ մայի-սին, կամ յունիսին: Ո՛հ, այդքան անսպասելի արագութիւն, անշուշտ մի նշանաւոր բան կայ մէջը, կը մտածէր միամիտ բաժանորդը. երկի ամսագրի հանձնարող քաղաքագէտ-քրօնիկեօրը տարած վե՛ր է կրեալի և յոյն-թիւրքական պատերազմի վրա այնպէս, որ ամբողջ Եւրօպան կը նախանձեր... Տարաբաղաբար, ոչ: Այս ան-գամ խմբագիրը ժամանակ չէ ունեցել, որով-հետեւ նա կոչված է եղել արտաշայտ վե-ր ու «Մշակի» աշխատակիցների և նրանց ազ-գակործան դերի մասին Հրատարակական ըն-կերութեան մէջ: Եւ այդ պատճառով՝ «Մուրճի» այդ համարում «Հրատարակական ընկերու-թեան» և «Մշակի» աշխատակիցներին նուիրված է երկու յօդուած՝ բաղկացած 20 էրեսից, մանր տառերով, իսկ կրեալին և Յունաստանին միայն մի յօդուած, բաղկացած 5 էրեսից, խոշոր տա-ռերով, այն էլ մեծ մասամբ արտատպած հե-ռագիրներից... Աֆերիմ...

Նիւ-Եօրկի՝ մի լրագրի մէջ տպված է հետևեալ արդար նկատողութիւնը.

«Մշակի» մէջ կարգացինք—և երկիցս ու երկիցս կարգացինք, որ մի գուցէ սխալ հաւ-կնայինք—թէ «Տարալի» խմբագրութիւն իր բաժանորդներուն հետհետեւ ուղարկել է իւր-րեւ պրեսմա, զպատկեր, գուշակեցք թէ ու-րու, եթէ կարող էր... զԱյստիկ Համիդի և զՄարի և զՔրի փայայից և զՄարի Պէյի: Կու-ղէնք իմանալ, թէ ինչ բարոյագիտական կամ գեղեցկագիտական դադարաբէ յայդ առաջնորդ-ւած է «Տարալի»: Ինչ խորին, անթափանցելի մտօք «Տարալի» կը տարածէ մեր սգաւոր փո-ղովրդի մէջ նորա ամենադարչելի դահիճներուն պատկերները: Ժողովուրդը ինչ հաճոյք կամ ինչ չինութիւն կրնայ ընդունիլ բարոյական հրէշնե-րու տեսարաննա «Տարալի»: Իր իմացալիս և բա-րոյական մակարդակին վրա անկարծելի դադա-րար մը կուտայ մեղ իր «պրեսմաներով»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԴՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՏԵՐԱԶՄԱՆ ԲԵՄԻՑ
10.9.07, 24 ապրիլի «Daily Telegraph» լրագրին Աթենքից հեռագրում են. «Զօրքից վերադառնալով, միմիստները վկայում են, որ պարսկական պատասխանատուութիւնը ար-քայորդի կօնստանտինի վրա չէ ընկնում: Նա այն կարծիքն էր, թէ պէտք է Լարիսան պաշա-պանել, բայց ընդհանուր շտաբը նրա հակառակ կարծիք յայտնեց և յետ քաշվելու հրաման արձա-կեց:

Կ. ՊՈԼԻՍ, 24 ապրիլի: Լուր է պտտում, որ թիւրքաց զօրքերը մասն Ֆարսա:

Կ. ՊՈԼԻՍ, 24 ապրիլի: Եանինայի զօրքերի նախկին հրամանատար Մուստաֆա-փաշան բեր-ված է Կ. Պոլիս պահապաններով, պաշտօնակն է արված և զինուորական դատարանին կենթարկվել:

ՎՈԼՈ, 24 ապրիլի: 15,000 յոյներ քաշվեցին դէպի Գոմօս, Ֆարսալայի ետև: Թիւրքաց բաղ-մաթիւ զօրքեր են կանգնած Ֆարսալայի առաջ:

Աթենք, 24 ապրիլի: Միմիստների խոր-հուրդը տեղեկացրեց արտասահմանի իր ներկայա-ցուցիչներին, թէ քաղաքացիական է կամաւորներ հաւաքել յունական զօրքի համար:

Գնդապետ Վասո Լալիուրի հրամանատար է նշանակված, արձակված ցնդապետ Մանուի տեղ: Գնեքալ Մակրիսի և Մատաբալապ ու Անտօն-փի զնդապետների տեղը, որոնք յունաց զօրքերի հրամանատարներ էին թէսալիայում, նշանակված են Մետակասո, Վասիլիադիս և Կորպաո զնդա-պետները: Մայր կօնստանտինիցս յետ է կանչ-ված Կրեալից և նշանակված է արքայադի կօնս-տանտինի շտաբի գլխաւոր:

Կ. ՊՈԼԻՍ, 24 ապրիլի: «Վարա» լրագրին Լարիսայից հաղորդում են, որ խալիսի-փայի զիւղիկները գրաւեց Պօզարակի: Մեմուրի, Նէշադի և Համիդի զիւղիկները գրաւեցին Հաւան-Թա-թար, Թաճիլար, Մայմուլի, Խալիլէր, Մուսալար և բացի դրանցից Չէմիդի զիւղի: Մատիլիւնում ծագած խառնակութիւններ լուրը, ըստ երեւոյ-թիւն, ճիշդ չէ:

Աթենք, 24 ապրիլի: Գնդապետ Մուշեղից յաղթական կերպով յետ մղեց թիւրքերին Վե-րեստինի մօտ: Երկու կողմից էլ կորուստները մեծ են: Թիւրքերը այժմ յարձակում են գործում երկու ուրիշ կէտերի վրա:

ՊԱՐԻՉ, 25 ապրիլի: Պաշտօնապէս հաստա-տում է, որ Ռուսաստանի ներկայացուցիչներին հրամանագրված է հաղորդել պետութիւններին կամ Մուրաթի վիճակագրերը, որով յայտարար-վում է, թէ Ռուսաստանը—եթէ Յունաստանը այդ մասին կը խնդրէ—պատրաստ է, համա-ձայնվելով պետութիւնների հետ, միջնորդու-

Թեան փորձ անելու Յանտատանի և Թիւրքիայի մէջ: Պետութեան ընդունելին այդ առաջարկը:

Կ. ՊՈԼԻՍ, 25 ապրիլի: Հաքի-փաշայի զորաւորները գրաւեց ամրութիւններն առաջին գիծը Վերտալիսի մօտ և յարձակում սկսեց երկրորդ գծի վրայ:

Աթլէն, 25 ապրիլի: Թաղաթափող զորաւորները յետ քաշվեց զէպի Գոմօկո ամրոցը կապուած իւր և կարգով: Սմոլէնից մնում է Վերտալիսի մօտ Վճիւն պաշտպանելու համար: Ֆարապը թողնում է: Հետագրական հաղորդակցութիւնը Սթէնքի հետ ընդհատված է:

Աթլէն, 25 ապրիլի: Սմոլէնից զորաւորները նախապէս յետ կը նահանջէին Սմոլէնից թողնաւորված է ընտրել յետ նահանջելու տեղը: Նա կը քաշվին, երկր, զէպի Վճիւն, որտեղ կը գտնվին զրահակիր նաւատորմի պաշտպանութեան ամակ, որպէս զի միանայ զորաւորակի գլխաւոր ուժերի հետ:

ԼԱՐԻՍԱ, 25 ապրիլի: Թիւրքերը վերջին Լարիսա:

ՊԱՐԻՑ, 24 ապրիլի: Պաշտօնապէս յայտարարված է, որ բաղարի հրդեհի ժամանակ սպանվեցին 111 անձինք, որոնցից 50 հոգի դեռ են չհնահաշված: Սպանվածների թիւումն է և Աւան-սոնեան զըստէին, ասորիական կայսրուհու քոյրը:

ՊԱՐԻՑ, 24 ապրիլի: Վիլհելմ կայսրը ցաւակցական հետազոտութեան հարցին՝ աղէտի առիթով: Ֆոր պատմականաց, թէ ինքն շատ զգացված է հետագրում յայտնված զգացմունքներին:

ՅԵՏԻՆԻ, 24 ապրիլի: Ի պատիւ սերբիական թաղաւորի տեղի ունեցաւ զորահանգէս Ապա, Ռուսաց կայսրուհու անուանակոչութեան առիթով, մաղթանք կատարվեց: Ներկայ էին՝ թագաւոր, իշխանական ընտանիքը և զիւլլաւորական մարմինը:

Խմբագիր՝ ԱԼԷԲԱՆԴԻՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախկին աւագ ՆՕՏԱՐ Նիկոլայ Սափիւնիշի: ՅԵԿՈՐՈՎ, ՈՐ ՆՕՒՆԱԿԱՅԵ Է ԹԻՖԼԻՍ ՔԱԼԱՔԻ ՆՕՏԱՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ, բացեց իր գրասենեակը սոյն ապրիլի 26-ին, Գանձակայայ փողոցի վրայ, կադրաֆիւրերի տանը, № 3, ուր գտնվում էր նախապէս Կ. ՄԱՄԻԿՈՆՈՎԻ գրասենեակը, 1—3

ԿԱՅԲԵՐԸ ԿՐԱԿԻՑ ՓՈՒՍԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է ընկերութեան պ.պ. անդամներին, որ

Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ժ Ո Ղ Ո Վ Ը

Ներկայ տարվայ ապրիլի 15-ին չը կայացած ժողովի տեղ, ընկերութեան կանոնադրութեան §§ 27-ի հիման վրայ՝
Նշանակված է մայիսի 4-ին, կիրակի, առաւօտեան 10½ ժամին, քաղաքային Դումայի դահլիճում:
(№ 48—չ. և հ.) 1—2

ՎՐԱՅ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Զորքը, արթի, ապրիլի 30-ին

Սիրողների խումբը

Բարեհաճ մասնակցութեամբ օր.օր. Արաշանի և Խիթարեանի

Յօդուտ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Կը ներկայացնէ

ԱՐԴԻԻՆԵՒՈՐ ՊԱՇՏՈՆ

Կամ. 4 դործ. Օտարովակու

Մ Կ Ն Ի Կ

Վ.Պ. 1 դործ. Արման Բօղոյի, Բիւս. Վրայրի Սիլիւն է երկկոյնան 8 ժամին:

Տօմարները կարելի է ստանալ Բարեգործական ընկերութեան գրասենեակում, Սերգիսկակայա, 16: (№ 48) 1—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱԼԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի գիտութիւն ընդհանուր, որ ցանկացողները կարող են ստանալ վարչութեան դիւանատան մէջ ամեն օր այն վերջնական ընտրողական ցուցակները, որոնք ուղղված են համաձայն քաղաքային գործերի նահանգական ատենի օրոշման, ներկայ տարվայ ապրիլի 8-ին, Թիֆլիսի Քաղաքային Դումայի Հայտարարներ ընտրելու 1897—1890 թ. քառամսկի համար: 2—3

ԾԱՆՈՒՄ Է

ՄԻ ՅԱՐԱՆԻ ՏՈՒՆ ՄԻ ՅԱՐԱՆԻ ՖԼԻԳԵԼՈՎ, որ փողոցի վրայ է: Հողի տարածութիւնը այդ տներին տակ 205 քառ. սառն է: Տօնը գտնվում է Թիֆլիսում, Օլգինկայայ փողոցի վրայ, № 31—ա: 1—3

Մ Ա Ս Ս Ա Ժ

Բժիշկների ղեկավարութեան տակ, պարագում եւս զանազան հիւանդութիւնների բժշկելով, ՄԱՍԱՅՈՎ, և առողջական ԳԻՄՆԱՍՏԻԿԱՅՈՎ: Հիւանդների ընդունելութիւնը՝ 5½—6½ ժամը երեկոյան: Աւելան փողոց, № 19: 34—147 ԳԵՈՐԳ ԽՈՍՐՈՎԱՆՅ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Խորհուրդը յայտնում է ի գիտութիւն ընկերութեան անդամներին, որ ապրիլի 27-ին, կիրակի երեկոյան ժամը 7-ին, Թիֆլիսի դումայի դահլիճում նշանակված է արտակարգ ընդհանուր ժողով, որի պարագմունքի առարկաները լինելու են:

1) Քննութիւն և հաստատութիւն Բաթումի ճիւղի 1897 թ. նախահաշիւի և Ախալցխայի ճիւղի 1897 թ. յաւելումական նախահաշիւի:

2) Ընկերութեան խորհրդի մի անդամի և երկու փոխանդամի ընտրութիւնը:

3) Քննութիւն ընկերութեան 16 անդամների յայտարարութեան, որով խնդրում են բեկանել մարտի 2-ի և 16-ի կայացած ընդհանուր ժողովների որոշումները, իբրի ապրիլի և խորհրդի ղեկավարում ու կարծիքը նրա մասին:

Ընկերութեան անդամները հրաւիրվում են վերանորոգել իրանց անդամակցութիւնը, դիմելով խորհրդի գրասենեակը, Սերգիսկայայ փողոց № 16:

3—3

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւաւնացութիւն ՄԱՐՍԻՅԱՅ ԲԱԹՈՒՄ, չորքը, արթի օրերը, երկու շաբաթ մի անգամ, սկսած յունիսի 25/6-ի չորքը, արթի:

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մանկով Տրապիզոն, Սամսոն և Պոլիս Մեկնում է Բաթումից՝ չորքը, արթի, ապրիլի 30-ին (մայիսի 12) ՄԻՆԳԵԼԻ չորքնաւը, նաւաւան ՇԵԼՏ և այլապէս շարունակաբար, երկու շաբաթ մի անգամ, չորքը, արթի օրերը, ժամի 4-ին ճաշից յետոյ: Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմարները տրվում են սովորականից:

Պակաս գն երկու Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների ստանալու համար թող բարեհաճին դիմել ընկերութեան գործակաւորներին:

ԲԱԹՈՒՄԻՄ—պ. Վիկտոր դ'Արմին, Նաբէլճիալայ: ԹԻՖԼԻՍԻՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիւնի փող. Նախկին Արմինու քաղաքային: ԲԱԹՈՒՄ—պ. Ա. Գիւրգարեանին, Կոլլորեանկինկայայ հրապարակ: ՆՕՎՈՐՈՍԻՅՍԿԱ—պ. Մեկնիւր Հերիւրոգերին: (№ 16) 11—20

Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան վարչութիւնը խնդրում է ընկերութեան անդամներին չորս բերել Ընկերութեան ընդհանուր ժողովին, որ նշանակված է սոյն ապրիլի 27-ին, առաւօտեան ժամը 11-ին, Կարուձիի դպրոցում (Գանուկայայ, № 25):

Ժողովի պարագմունքներն են.

1) Անցեալ ընդհանուր ժողովի արձանագրութեան ընթերցումը.

2) Անցեալ տարվայ ելմուտքի հաշիւի ընթերցումն ու հաստատելը.

3) 1897 թ. համար կազմած նախահաշիւի ընթերցումն ու հաստատելը. և

4) վարչութեան միամեայ գործունէութեան տեղեկագրի ընթերցումը: (հ. չ.) 2—2

ԿՕՆԿՈՒՐՍԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

որ հիմնված է սնանկ իւան Բանալիստուրովի Տէլեաֆոնի գործերի համար, որանով յայտարարում է, որ ինքն նորից դրել է հրապարակական տնօրէն այս ապրիլի 27-ին, 12 ժամին, Կոնկուրսի շինութեան մէջ, Նիկոլայիսկայայ փողոցի վրայ, տուն № 81, վեց դատարկ հողաբաժիններ, իւրաքանչիւր հողաբաժինը 256-ից մինչև 317 քառ. սառն տարածութեամբ, որոնք գտնվում են Մոսկովայայ փողոցի վրայ, Ավստրիական ձիաբարձ երկաթուղու գծով, կայարանի մօտ, ուր առաջ գտնվում էր Տէլեաֆոնի փայտե պահեստը: Պայմանները կարելի է տեսնել Կոնկուրսային վարչութեան մէջ ամեն օր՝ երեկոյան 5-ից մինչև 6 ժամը: Անուրից առաջ իւրաքանչիւր հողաբաժինի համար անպատճառ պէտք է 500 ր. գրաւական մտցնել, առանց որի ոչ ոք չէ կարող մասնակցել աճուրդին:

3—3

Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ի Ռ Թ Ի Ֆ Լ Ի Մ Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի

գ1-ն Մարտի 1897

Պ Ա Հ Ա Ն Զ Ք	Թիֆլիսում	Բաթումում	Ընդամենը	Պ Ա Ր Տ Ք	Թիֆլիսում	Բաթումում	Ընդամենը
1. Գրամարկ (առձեռն թղթադրամ).....	179,560—45	285,138—49	464,698—94	1. Հիմնական դրամադրութիւն (10.000 բաժին-տոմսեր, à 200 րուբլ)	2,000,000 —	—	2,000,000 —
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկի. բաժնուժ... 3,305,710—04	409,732—68	881,700 —	1,291,432—68	2. Պահեստի դրամադրութիւն.....	1,000,000 —	—	1,000,000 —
3. Զեղջ. (Disconto) մուրհ. երկու տարադրութիւն 412,707—09	3,305,710—04	1,886,686—72	5,192,396—76	3. Առանձին պահեստի դրամադրութիւն . . .	14 693 80	—	14,693 80
4. Զեղջ. մուրհ. մի տար. ապաւ. տոկոս. թղթ. 29,899—59	412,707—09	18,000 —	430,707—09	4. Գրամարկ չիֆուր. անշարժ կալուածքի.	—	3,768—78	3,768—78
5. Զեղջում տոկոսաբեր թղթ. կտրու. և այլն 29,899—59	29,899—59	7,575—57	37,475—16	5. Գրամական աւանդներ՝			
6. Փոխաւորութիւն գրաւականով՝				ա) Պայմանաւորում.....	4,809,573—55	2,015,388 —	6,824,961—55
ա) Պետութեանից ապաւ. տոկոսաբ. թղթերի.	1,274,652—66	675,066—81	1,949,719—47	բ) Պահանջ.....	224,429—51	133,258 —	357,687—51
բ) > ոչ ապաւ. > >	333,967 —	28,375 —	362,342 —	գ) Ընթացիկ հաշիւով. հասարակ.	1,028,854—02	2,394,298—87	3,423,152—89
գ) Ապրանքների.....	—	1,278,885—96	1,278,885—96	դ) > > պայմանաւորում.....	—	57,861—54	57,861—54
դ) Ոսկու և արծաթի.....	—	3,464—45	3,464—45	6. Թղթակցներ՝			
ե) Բանկի պատկանեալ տոկոսաբեր թղթեր. 2,001,932—81	—	35,753—97	2,037,686—78	ա) Նոթա հաշիւը (Loro).....	3,394,297—03	—	3,394,297—03
զ) Ոսկի և արծաթահամարի փոխանակադրեր. 300,294—67	2,001,932—81	159,442—37	459,739—04	բ) Բանկի հաշիւը (Nostro).....	4,424,951—77	—	4,424,951—77
7. Տոկոսաբեր թղթեր պահեստի դրամադրութիւն... —	300,294—67	—	—	7. Բաժնիւնների հաշիւը կենտ. վարչութիւն. հետ.....	—	3,311,164—64	3,311,164—64
8. Թղթակցներ՝				8. Կենտրոն. վարչութիւն. հաշիւը բաժնի. հետ. Բանկի բաժնետոմսերի անվճար կտրու. ների բաշիւր.....	4,884—90	—	4,884—90
ա) Նոթա հաշիւը (Loro).....	3,642,414—72	—	3,642,414—72	9. Զը վճարուած տոկոսներ, աւանդների, ընթացիկ հաշիւների և այլ գործողութեանց.....	95,434—60	49,825—54	145,260—14
բ) Բանկի հաշիւը (Nostro).....	5,003,238—48	—	5,003,238—48	10. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ.....	88,445—47	63,551—85	151,997—32
11. Բաժնիւնների հաշիւը կենտ. վարչ. հետ. և կենտրոնական վարչութեան հաշիւը բաժնիւնների հետ.....	3,298,841—25	—	3,298,841—25	11. Փոխանցիկ գումարներ.....	75,645—84	73,559—42	149,205—26
12. Պայմանաւորում անցուցած փոխաւորութեան. 16,974 —	—	2,848,659—80	2,848,659—80	12. Արդիւնք 1895 թ.	239,644—07	96,302—04	335,946—11
13. Բողոքված մուրհակներ.....	2,240 —	13,790 —	30,764 —				
14. Ընթացիկ ծախսեր.....	12,645—46	75 —	2,315 —				
15. Կանկարաւոր և սկզբնական ծախսեր....	2,796—84	14,071—81	26,717—27				
16. Զեղջ տոկոսներ ծախսեր.....	8,237 —	6,111—47	8,908—31				
17. Գնումն և վաճառ. արժեթղթ. ըստ յանձնար. 73,100 —	—	5,403—44	13,640—44				
18. Անշարժ կալուածք.....	—	50,777—82	50,777—82				
Բ. Ա.	20,308,944—74	8,198,978—68	28,507,923—42	Բ. Ա.	20,308,944—74	8,198,978—68	28,507,923—42